# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» սեպտեմբերի 2025 թվականի N 2180-Ա

**<ԻԶԻՖԵՅ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 24Ա 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Իզիֆեյ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 18-ին 14138-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Իզիֆեյ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Սպանդարյան 24Ա 1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Իզիֆեյ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Միհեր Գալստյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-22 15:54:40 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի** N2179-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 199 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Գալստյանի 2025 թվականի սեպտեմբերի 12-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 17-ին 14023-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հակոբ Գալստյանի Գյումրի քաղաքի Շահումյան 199 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հակոբ Գալստյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2178Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ N 4/2 ՀԱՍՑԵԻ 62,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի N 4/2 հասցեի 62,35 (վաթսուներկու ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, **որոշում եմ.**

1. Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի N 4/2 հասցեի 62,35 (վաթսուներկու ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2025-09-22 10:28:54 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» սեպտեմբերի 2025 թվականի N2177-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՉՈՒՄ ԶԵՏԵՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2.2.-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները ձևավորելու նպատակով՝ համակարգչում զետեղել հետևյալ թեկնածուների անուն, ազգանունները.

1) Ավետիս Առաքելյան
2) Աշոտ Պետրոսյան
3)Կարեն Մալխասյան
4)Սամվել Սիմոնյան
5) Գագիկ Ղարիբյան
6)Քրիստինե Մալխասյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

«19» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2176-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 445-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 5-րդ մասով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2022 թվականի մարտի 10-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդները կազմակերպելու համար աճուրդային հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմը հաստատելու և աճուրդավար ու արձանագրող նշանակելու մասին» N 445-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2025-09-18 16:18:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 թվականի №2175-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08–Ի №2906-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 08–ի «Գյումրի քաղաքի Ս. Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 228.35 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0789-0120-ից) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №2906-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրում և որոշման կայացման մեջ «228.35» թիվը փոխարինել «201.20» թվով:

2025-09-19 16:11:56 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 թվականի №2174-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ. ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 380.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0557-0085-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ. Աղայան փողոցի հարևանությամբ գտնվող 380.08 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0557-0085-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ղ. Աղայան փողոց, 81/1 հողամաս**

2025-09-19 16:13:49 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 թվականի №2173Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 101.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1001-0018-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի հարևանությամբ գտնվող 101.49 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1001-0018-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Տիգրանյան փողոց, 11/12 հողամաս**

2025-09-19 16:09:05 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 թվականի № 2172-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 18 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №24072025-08-0018) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Խաչատրյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13606 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները և հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Ն. Ստեփանյան փողոց 18 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №24072025-08-0018) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **321.10** քառակուսի մետր մակերեսով շինությունները և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ստեփանյան փողոց, 18 շինություն**

2) **105.53** քառակուսի մետր մակերեսով շինությունները և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ստեփանյան փողոց, 18/1 շինություն**

2025-09-19 16:10:36 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

« 19 » սեպտեմբերի 2025 թվականի № 2171-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 209.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0502-0081-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ գտնվող 209.1 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0502-0081-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 2/35 հողամաս**

2025.09.19 16:19:25 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 թվականի №2170-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 8Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարգարիտ Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13723 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Մարգարիտ Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաք, Բաղրամյան փողոց, 8ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մարշալ Բաղրամյան փողոց, 8/1 բնակելի տուն**

2025-09-19 18:17:20 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**Շ Ի Ր Ա Կ Ի  Մ Ա Ր Զ**
**Գ Յ Ո Ւ Մ Ր Ի  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«19» սեպտեմբերի 2025 թվականի N 2169-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 04-Ի N 1599-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 3003-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 3003-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08/09/2025 թվականի N Կ-08092025-08-0033 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան 1-ին նրբանցք N 2 հասցեի 95,6 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 203,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Սուսաննա Ղուկասի Ղուկասյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 3003-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<203,7(երկու հարյուր երեք ամբողջ յոթ տասնորդական)>> թիվն ու բառերը փոխարինել <<212,2(երկու հարյուր տասներկու ամբողջ երկու տասնորդական)>> թվով և բառերով:
2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 3003-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2025 թվականի օգոստոսի 04-ի N 1599-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2025-09-19 12:23:52 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2168-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ ԱԼԲԵՐՏ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ըմբշամարտի՝ Հարություն Խաչատրյանի և Ալբերտ Մնացականյանի հիշատակին նվիրված 2025 թվականի սեպտեմբերի 28–30–ը Երևան քաղաքում կայանալիք միջազգային մրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 19-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ըմբշամարտի՝ Հարություն Խաչատրյանի և Ալբերտ Մնացականյանի հիշատակին նվիրված միջազգային մրցաշարին գործուղման ծախսերի 2025 թվականի սեպտեմբերի 28–30–ը Երևան քաղաք գործուղել 18 մարզիկի և 4 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 513.400(հինգ հարյուր տասներեք հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

2025-09-19 13:44:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
նոյեմբերի 19 N 2868-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության հունահռոմեական ըմբշամարտի՝ Հարություն Խաչատրյանի և Ալբերտ Մնացականյանի հիշատակին նվիրված միջազգային մրցաշարին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գաբրիելյան | Հովհաննես | Մարզիկ | AX0285911 | 11802059666400 | 22.900 |
| 2 | Բաղդասարյան | Արսեն | Մարզիկ | AL0592753 | 19300777861900 | 22.900 |
| 3 | Պետրոսյան | Արթուր | Մարզիկ | AV0544028 | 1570099240260200 | 22.900 |
| 4 | Ավետիսյան | Կորյուն | Մարզիկ | AL0576543 | 11802054515800 | 22.900 |
| 5 | Հարությունյան | Միհրան | Մարզիկ | AX0261595 | 11802065500700 | 22.900 |
| 6 | Դավոյան | Աշոտ | Մարզիկ | AX0518658 | 1570099239940200 | 22.900 |
| 7 | Հարությունյան | Ազատ | մարզիկ | AX0311490 | 1930097177061900 | 22.900 |
| 8 | Ավետիսյան | Արարատ | Մարզիկ | AL0289396 | 19300041461800 | 22.900 |
| 9 | Հովեյան | Վահե | Մարզիկ | AU0502451 | 19300402525300 | 22.900 |
| 10 | Պետիկյան | Սարգիս | Մարզիկ | AU0222011 | 19300515329400 | 22.900 |
| 11 | Ալեքսանյան | Սմբատ | Մարզիկ | AO0325555 | 1930097166099200 | 22.900 |
| 12 | Հովհաննիսյան | Հարություն | Մարզիկ | AX0498541 | 2470098839320000 | 22.900 |
| 13 | Գալոյան | Վարդան | Մարզիկ | AU0689592 | 1570098907480100 | 22.900 |
| 14 | Իլայան | Հակոբ | Մարզիկ | AX0693665 | 220064953775000 | 22.900 |
| 15 | Մանուկյան | Դավիթ | Մարզիկ | AL0583635 | 1570069637616300 | 22.900 |
| 16 | Պետրոսյան | Ռազմիկ | Մարզիկ | AX0338212 | 1570090034090300 | 22.900 |
| 17 | Տոնոյան | Սամվել | Մարզիկ | AL0486921 | 11802060023500 | 22.900 |
| 18 | Մկրտչյան | Ալբերտ | Մարզիկ | AL0477942 | 1570038589805800 | 22.900 |
| 19 | Սարգսյան | Սարիկ | Մարզիչ | AS0555728 | 1930041892080300 | 25.300 |
| 20 | Գևորգյան | Անդրանիկ | Մարզիչ | AS0463031 | 1930031968810300 | 25.300 |
| 21 | Ղուդրատյան | Հովհաննես | Մարզիչ | AP0698770 | 1930041880440100 | 25.300 |
| 22 | Գևորգյան | Գևորգ | Մարզիչ | AR0254473 | 1930040665210200 | 25.300 |
| Ընդամենը՝ | | | | | | 513.400 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*«19» սեպտեմբերի 2025 թվականի N2167-Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԵՎՈՐԳ ԱԼԲԵՐՏԻ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ (3/4), ԼԻԼԻԹ ՖԵՐԴԻՆԱՆՏԻ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ (1/4) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀՆՈՑԱՎԱՆ 3-ՐԴ ՇԱՐՔ N22 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԴՌԱՆ ՁԵՎԱՓՈԽԵԼԸ, ԻՆՔՆԱԿԱՄ 1 (ՄԵԿ) ԲԱՑՎԱԾ ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 269.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Գևորգ Ալբերտի Ղարագյոզյանին (3/4), Լիլիթ Ֆերդինանտի Ղարագյոզյանին (1/4) պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավան 3-րդ շարք N22 հասցեի բնակելի տան 1(մեկ) պատուհանը ինքնակամ դռան է ձևափոխվել, ինքնակամ բացվել է 1 (մեկ) դուռ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 269.62 (երկու հարյուր վաթսունինը ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Լիլիթ Ղարագյոզյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Լիլիթ Ղարագյոզյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականին N6251 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացիներ Գևորգ Ալբերտի Ղարագյոզյանին(3/4) (ծնված 1973 թվականի մայիսի 09-ին), Լիլիթ Ֆերդինանտի Ղարագյոզյանին(1/4) (ծնված 1975 թվականի մայիսի 19-ին) պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավան 3-րդ շարք N22 հասցեի բնակելի տան 1 (մեկ) պատուհանն ինքնակամ դռան ձևափոխելը և ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 4632 (չորս հազար վեց հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Ճանաչել քաղաքացիներ Գևորգ Ալբերտի Ղարագյոզյանի և Լիլիթ Ֆերդինանտի Ղարագյոզյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հնոցավան 3-րդ շարք N22 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող, կառուցապատ 14.79(տասնչորս ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Ընդհանուր բակի 254.83 (երկու հարյուր հիսունչորս ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան, անկառուցապատ հողամասի նկատմամբ ճանաչել ընդհանուր բակի համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը;
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-09-19 09:33:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2166-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 54 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի N 54 հասցեի բնակելի տունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գայանե Թելմանի Սարգսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1119102 վկայական), որտեղ հողամասի մակերեսը գրված է 54,03 (հիսունչորս ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր, որը ստացվել է սխալ թվաբանության արդյունքում:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, որի արդյունքում պարզվել է, որ N 1119102 վկայականում նշված հողամասի կողմնային չափերի և կոորդինատների համաձայն հողամասի մակերեսը կազմում է 70,95 (յոթանասուն ամբողջ իննսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր:

Փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը ճշտելու, թվաբանական սխալն ուղղելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Թելմանի Սարգսյան դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 28.07.2025թ. N 10567 թվագրմամբ),

**Որոշում եմ.**

1. Հաստատել «Ս Ֆոռմատ Սթայլ» ՍՊԸ-ի կողմից կազմված, քաղաքացի Գայանե Թելմանի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոցի N 54 հասցեի բնակելի տան հողամասի հատակագիծը՝ 70,95 (յոթանասուն ամբողջ իննսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի մակերեսի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

2025-09-19 09:34:25 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«19» սեպտեմբերի 2025 թվականի N 2165-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի N 2001-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի N 2001-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց N 2/11 հասցեի բնակելի տան 1-ին հարկի նպատակային և գործառական նշանակությունները փոփոխելու մասին>> N 2001-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը ՝
   1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<106,5(մեկ հարյուր վեց ամբողջ հինգ տասնորդական)>>թիվը և բառերը փոխարինել <<107,87(մեկ հարյուր յոթ ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական)>> թվով և բառերով:

2025-09-19 10:51:07 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» սեպտեմբերի 2025 **թվականի** N2164-Ա

### <<ԻՄԻՋ Մ.Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 08-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 09-ին 13355-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառներ ընդհանուր 267.84 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Իմիջ Մ.Գ.>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-19 11:27:21 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2163-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ № 7/2 ՀԱՍՑԵԻ 213.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի № 7/2 հասցեի 213.28 (երկու հարյուր տասներեք ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի № 7/2 հասցեի 213.28 (երկու հարյուր տասներեք ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840

**2025թ. ք.Գյումրի** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» սեպտեմբերի 2025 թվականի N2162-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԼ.ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 362.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 61.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (50.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ալ.Մանուկյան փողոցի հարևանությամբ, 362.8 (երեք հարյուր վաթսուներկու ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 61.8 (վաթսունմեկ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (50.43(հիսուն ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Հակոբ Պետրոսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023YULEGX ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Ալ.Մանուկյան փողոցի հարևանությամբ, 362.8 (երեք հարյուր վաթսուներկու ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 61.8 (վաթսունմեկ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (50.43(հիսուն ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Հակոբ Պետրոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-09-19 09:35:40 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2161-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 107/5, 107/6 ՀԱՍՑԵՈՎ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար բաց մրցույթի միջոցով «Քաղաք Գյումրի Երևանյան խճուղի 107/5, 107/6 հասցեներով նախակրթարանի շենքի վերանորոգման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա.պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հենրիկ Գասպարյան– Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,

բ.պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Կարեն Մխիթարյան – Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2025 թվականի N 2160-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ « ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 107/5, 107/6 ՀԱՍՑԵՈՎ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար բաց մրցույթի միջոցով «Քաղաք Գյումրի Երևանյան խճուղի 107/5, 107/6 հասցեներով նախակրթարանի շենքի վերանորոգման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2)Դմիտրի Մանվելյան –Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3)Կարեն Կարապետյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ,

4) Հովիկ Ղազարյան– Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

5) Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**2025թ. ք. Գյումրի** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2025 թվականի № 2159Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԱՎԱՐ ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների աճուրդները կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով՝ հետևյալ անհատական կազմով.
1) Կնյազ Մանասյան – Գյումրի համայնքի փորձագետ
2) Հովսեփ Սիմոնյան – Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական
3) Ռուբեն Մարտիրոսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
4) Արտաշես Գևորգյան – «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի տեղակալ
5) Սեդրակ Սահակյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ
6) Վարդան Եդիգարյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ
7) Աննա Մուրադյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ
8) Էդգար Բաղդասարյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ
9) Օլգա Մուրադյան – «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի համակարգչային օպերատոր:
2.Նշանակել՝
1) աճուրդավար՝ Կնյազ Մանասյանին
2) արձանագրող՝ Օլգա Մուրադյանին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում աճուրդային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» սեպտեմբերի 2025 թվականի N 2158 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՍՄԻԿ ՎԵԼԻԽԱՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՍԵՑՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 108.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ավագ քննիչ Գ. Հովհաննիսյանի 2025 թվականի օգոստոսի 28-ի N 18-1653կգ-25 գրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Հասմիկ Վելիխանի Վիրաբյանի լիազորությունները համարել ժամանակավորապես կասեցված՝ 2025 թվականի հուլիսի 8-ից:
**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 18-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**